

Ահա՛ կ'առնեմ, կրկին կրկին,
 Մեղոյշ բարեւն՝ իր ծառերէն
 Ներս երկարող յոյր թաթիկին:
 Անցա՛ւ ծովէն մեծ կոյսն հրավարս,
 Ու կապոյտին եղաւ ինք հարս:
 Ու ջրծաղիկ մը գերթ՝ լայնշի
 Լըճակին մէջ. ամպ-մըշուշի
 Լըճակին մէջ հորիզոնին՝
 Դեղին թերթերն իր կ'ընդունին
 Չէնիթին երգը վարդագին:
 Եւ երկինքի նոր տարփանքին
 Եւ հիացքին գերթ նըշանակ՝
 Կ'ընծայուի թանկ ու փառունակ
 Շողակն առջի լուսաւորին:

29. ԻՐԻԿՈՒԱՆ ՄԵՋ ԽՈՐԻՆ...

Իրիկուան մէջ խորին,
 Երբ օդայած կը թռչի,
 Ծիրանեծաղիկ փետուր անուրջի՝
 Յիր ճառագայթն արեւին՝
 Յեծքն է աղբիւրին մէջն ամէն ճիչի:
 Իրիկուան մէջ խորին,
 Երանգներ երբ ջուրին
 Մէջը մարմըրին,
 Ու թանձրամած ժըխորին
 Իյնան թեւերը մեկէն.
 Իրիկուան մէջ խորին՝
 Կարկաջն աղբիւրին կը կանչէ յստակ՝
 Յովիկ նաժիշտն՝ իր ջուրին
 Խաժ հանդերձը փոթելու:
 Եւ իրիկուան մէջ խորին,
 Ծանրը ինչպէս ալելու,
 Կարկաջն աղբիւրին կը կանչէ յստակ,
 Դեռ յամեցող հօտն ըսպիտակ
 Գառնուկներուն՝
 Որոնք հեռո՛ւն՝
 Մըթնշաղին մէջ կ'իյնան